

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի
պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

**ՊԱՏՇԱՃ ԱՊԱՅՈՒՅՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ԵՎ
ԱՊԱՅՈՒՅՑԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ**

2021թ. ՀՀ ՔրԴՕ-ում պատշաճ ապացուցման սկզբունքն էքսպլիցիտ ամրագրվեց քրեական վարույթի սկզբունքների պատվավոր համակարգում՝ փոխարինելով ապացույցների ազատ գնահատման սկզբունքին: Այն պահանջում է, որ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք, ներառյալ խափանման միջոցի հիմքերը, հաստատվի միայն վերաբերելի, թույլատրելի ու հավաստի ապացույցներով: Սա ենթադրում է անցում դեպի «ճանաչողություն միայն ապացուցման ձևով» մոդել: Չնայած օրենսդրական նորամուծությանը, այս սկզբունքը դեռ ամբողջությամբ չի կիրառվում դատական երաշխիքների (օրինակ՝ կալանքի) վարույթում, որտեղ դատարանները շարունակում են օգտագործել «ճանաչողություն՝ առանց ապացուցման» մոդելը և հրաժարվում են գնահատել ապացույցների թույլատրելիությունը: Հոդվածում հիմնավորվում է, որ դատական իշխանությունը պատշաճ ապացուցման սկզբունքի հիման վրա պետք է վերանայի այս պրակտիկան և ճանաչի իր իրավասությունը՝ գնահատելու ապացույցների թույլատրելիությունը նաև դատական երաշխիքների վարույթում:

Հիմնարարներ - Պատշաճ ապացուցում, դատական երաշխիքներ, դատական վերահսկողություն, «ճանաչողություն» միայն ապացուցմամբ», կալանքի կիրառման իրավաչափության պայմաններ, ապացույցի թույլատրելիություն:

Ներածություն

2021թ. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (ՀՀ ՔրԴՕ) «ապացույցների ազատ գնահատման» սկզբունքի փոխարեն «պատշաճ ապացուցման» սկզբունքի ներդրումը հիմնարար գաղափարախոսական փոփոխություն է, որով հատկապես կարևորություն է ապացույցների ձեռքբերման պատշաճ իրավական ընթացակարգը:

Այնուամենայնիվ, այս սկզբունքային նորամուծության գործնական իրականացումը, մասնավորապես՝ դատական երաշխիքների (օրինակ՝ կալանք, գույքի արգելադրում) վարույթում, բխվում է էական խոչընդոտների: Թեև օրենսդրությամբ պատշաճ ապացուցման սկզբունքը էքսպլիցիտ ճանաչվեց վարույթի սկզբունքների պատվավոր համակարգում, սակայն դատական պրակտիկայում հատկապես դատական երաշխիքների վարույթում պահպանվում է «ճանաչողություն՝ առանց ապացուցման» հնացած մոդելը, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատվում են ոչ թե պատշաճ ապացույցներով, այլ դատավարական ձև չունեցող «փաստական տվյալներով»: Սա խաթարում է սկզբունքի ամբողջականությունը:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել պատշաճ ապացուցման սկզբունքի կիրառման խնդիր-

ները դատական երաշխիքների վարույթում, իսկ գիտական նորույթն այս սկզբունքի հիման վրա դատարանի կողմից դատական երաշխիքների վարույթում ապացույցների թույլատրելիությունը գնահատելու իրավասության անհրաժեշտության հիմնավորումն է, ինչը կնպաստի օրենսդրական և պրակտիկական հակասության լուծմանը:

Հոդվածի առաջին բաժինը նվիրված է պատշաճ ապացուցման սկզբունքի էության, նրա ներդրման պատճառների և ցանկացած հանգամանքի ապացուցման պահանջի վերլուծությանը: Երկրորդ բաժինում քննարկվում է դատական երաշխիքների վարույթում «ճանաչողություն միայն ապացուցման ձևով» մոդելի դոկտրինալ էվոլյուցիան և Հայաստանի իրավական համակարգում դրա կիրառման մարտահրավերները: Երրորդ բաժինում ուսումնասիրվում է դատական երաշխիքների վարույթում ապացույցների թույլատրելիությունը և հավաստիությունը գնահատելու դատարանի իրավասության հարցը:

Հետազոտությունն իրականացվել է դոկտրինալ (տեսական), համեմատական-իրավական և ձևական-իրավական (նորմատիվ) վերլուծության մեթոդների համադրությամբ: Դոկտրինալ մեթոդով ուսումնասիրվել են պատշաճ ապացուցման և դատական վերահսկողության տեսական հիմքերը: Համեմատական-իրավական մեթոդը հնարավորու-

թյուն է տվել վերլուծելու ՀՀ ՔրԴՕ-ի 1998թ. և 2021թ. խմբագրությունների միջև առաջացած սկզբունքային տարբերությունները: Ձևական-իրավական մեթոդով մանրակրկիտ ուսումնասիրվել են օրենսդրության համապատասխան նորմերը:

Տվյալների աղբյուրներ և վերլուծություն. Որպես տեղեկատվության հիմնական աղբյուրներ օգտագործվել են՝ 1) նորմատիվ ակտեր (1998թ. և 2021թ. ՀՀ ՔրԴՕ), 2) դատական պրակտիկա (ՀՀ վճռաբեկ և վերաքննիչ դատարանների, ինչպես նաև ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կոնկրետ գործերով որոշումները), 3) գիտական գրականություն (հայ և ռուս դատավարագետների աշխատություններ), 4) միջազգային իրավական ակտեր և պրակտիկա (Եվրոպական դատարանի իրավաբանություն):

1. Պատշաճ ապացուցման սկզբունքը ՀՀ քրեական դատավարությունում

1.1. Սկզբունքի էությունը

Պատշաճ ապացուցման սկզբունքը էքսպլիցիտ (ուղղակիորեն) ամրագրվեց 2021թ. ՀՀ ՔրԴՕ-ի՝ քրեական վարույթի սկզբունքներին նվիրված գլխում: ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ: Պատշաճ ապացուցման սկզբունքի էությունն այն է, որ փաստի մասին վերաբերելի, հավաստի և թույլատրելի տվյալները պետք է հավաքվեն, ստուգվեն և գնահատվեն օրենքով նախատեսված և իրավունքի ընդհանուր սկզբունքներին չհակասող իրավական ընթացակարգի շրջանակներում: Ապացույցը պատշաճ է, եթե այն վերաբերելի, թույլատրելի և հավաստի է :

ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդվածում ամրագրված են պատշաճ ապացուցման սկզբունքից անմիջապես բխող հետևյալ վարքագծի կանոնները:

1.2. Ապացույցների ազատ գնահատումը և պատշաճ ապացուցումը

Մինչև պատշաճ ապացուցման սկզբունքի էքսպլիցիտ ճանաչումը, 1998թ. ՀՀ ՔրԴՕ-ում, որպես քրեական վարույթի սկզբունք, ամրագրված էր ապացույցների ազատ գնահատումը: Այսպես 1998թ. ՔրԴՕ 25-րդ հոդվածում սահմանված էր.

«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը

պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Ապացույցների ազատ գնահատումը՝ որպես վարույթի սկզբունք համարելու՝ Օրենսդրի դիրքորոշման գործնական հետևանքն այն էր, որ հատկապես դատավորի մտածողությունում գերակայող դարձավ հետևյալ թեզը. եթե դատավորի գործունեությունն հիմնված է ապացույցի ազատ գնահատման սկզբունքի վրա, ապա նա պետք է ունենա լայն հնարավորություն ինքնուրույն որոշելու, թե որ դեպքում փաստի մասին տվյալը (փաստական տվյալը, ապացույցը) կարող է ճանաչվել անթույլատրելի, չնայած այն հանգամանքի, որ ապացույցի թույլատրելիության կանոնները առավելապես ֆորմալացված են: Ընթացակարգային խախտմամբ (օրենքի էական խախտմամբ) ձեռք բերված մի շարք ապացույցներ չէին ճանաչվում անթույլատրելի, քանի որ վարույթն իրականացնող մարմինն ապացույցների ազատ գնահատման սկզբունքի ազդեցության ներքո դրանք որակում էր որպես «ոչ էական» խախտումներ:

Տարածում ստացավ նաև այն պրակտիկան, երբ ապացույցն անթույլատրելի էր ճանաչվում, եթե ձեռք էր բերվել ոչ թե ընթացակարգային էական խախտումների դեպքում (ձևական խախտում), այլ մարդու հիմնական իրավունքների խախտումների դեպքում (նյութական խախտում): Մինչդեռ, օրենքի էական խախտումը չի կապվում բացառապես մարդու իրավունքներին միջամտելու հետ: Օրինակ՝ մինչդատական վարույթում համապատասխան ապացուցողական կամ վարութային այլ գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից ապացույց (տվյալներ) ձեռք բերելը համարվում է ընթացակարգային (օրենքի էական) խախտում, քանի որ վարութային գործողություն կատարելու իրավասություն չունեցող անձի կողմից այդ գործողությունը կատարելն ինքնին մարդու հիմնական իրավունքի խախտում չէ (ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

Այլ կերպ ասած՝ ապացույցների ազատ գնահատումը՝ որպես դատավարության սկզբունք դիտելու հետևանքով ձևավորվեց ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ֆորմալացված կանոնները խիստ հայեցողական գնահատելու մոտեցումը, ինչն էլ համակցվելով դատավորների մեղադրական հսկում ունենալու հոգեբանական գործոնի հետ, ձևավորեց այն պրակտիկան, երբ դատավարական կարգի մի շարք էական խախտումներ պարզապես որակվում էին որպես օրենքի ոչ էական խախտումներ, իսկ փաստի մասին ձեռք բերված տվյալներն անթույլատրելի ճանաչվելու փոխարեն դրվում էին մեղադրանքի հիմքում: Օրինակ՝ մինչև 2021թ. ՀՀ ՔրԴՕ ընդունումը թե՛ դատախազները, թե՛ դատավորները, թե՛ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը տարբեր մտացածին պատճառաբանություններով շրջանցում էին քննչական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ենթակայության կանոնները խախտելու հիմքով փաստական տվյալները (ապացույցները) անթույլատրելի ճանաչելու հարցերը: Ընդ որում, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը 07.06.2021թ. ԲԳԽ-29-Ո-Կ-11 որոշմամբ նշել է, որ ի տարբերություն արդար դատաքննության իրավունքի մաս հանդիսացող՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից դատվելու իրավունքի, անձը չունի քննչական ենթակայության առարկայական և տարածքային կանոններին բավարարող քննչական մարմնի կողմից իր գործի նախաքննության իրավունք, ավելին՝ փաստել է, որ 1998թ. ՀՀ ՔրԴ-Օ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դատախազին վերապահել է քննչական ենթակայության կանոններից շեղվելու իրավասություն: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի այս որոշումը հնարավոր կլինի դիտարկել զուտ օրենքի մեկնաբանման տիրույթում, եթե նրա անդամներից մեկը տարիներ առաջ չնշեր, որ քննիչներն արդարացման հիմքով քրեական վարույթը կարճելով իրականացնում են արդարադատություն, իսկ մյուս անդամը, վերը նշված որոշումը ստորագրելուց մեկ տարի անց՝ 23.06.2022թ., հանրային հեռուստարձկերությունում իր արարքների վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնելու դեպքի առնչությամբ հարցազրույց տալիս, մի քանի անգամ իմպերատիվ կերպով չնշեր, որ ՀՀ գլխավոր դատախազը իրավասու չէ փոխելու բացառիկ քննչական ենթակայության կանոնները:

2021թ.-ին Օրենսդիրը հրաժարվեց ապացույցների ազատ գնահատումը որպես քրեական դատավարության սկզբունք ճանաչելու մոտեցումից. նոր ՔրԴ-Օ-ում ապացույցների ազատ գնահատման փոխարեն, որպես քրեական վարույթի սկզբունք, ամրագրվեց պատշաճ ապացուցումը: Ասվածը չի նշանակում, որ օրենսդիրն հրաժարվել է ապացույցների ազատ գնահատման կանոնից: Այսպես՝ ՀՀ ՔրԴ-Օ 22-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ եզրափակիչ դատավարական ակտը պետք է հիմնվի հետազոտված ապացույցների ազատ և բարեխիղճ գնահատման վրա: Այսինքն՝ ապացույցների ազատ գնահատման մասին այս պահանջն համարվել է պատշաճ ապացուցման սկզբունքից բխող կանոններից մեկը:

Ապացույցների ազատ գնահատման կանոնը կապված է նաև ապացույցները ներքին համոզմամբ գնահատելու պահանջի հետ, որն ամրագրված է ՀՀ ՔրԴ-Օ 105-րդ հոդվածի 2-րդ մասում.

«Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ»:

Ապացույցների ազատ գնահատումն օրենսդրական ձևակերպումների տեսանկյունից այլևս

քրեական վարույթի ինքնուրույն սկզբունք չէ, այն դատավարության սկզբունքի բարձր «կարգավիճակից» իջեցվել է քրեական վարույթի սկզբունքից (պատշաճ ապացուցման սկզբունքից) անմիջապես բխող կոնկրետ վարքագծի կանոնի աստիճանի:

Ապացուցողական իրավունքի սկզբունքների նկատմամբ Օրենսդրի դիրքորոշման այս փոփոխությունն ունի հիմնարար նշանակություն և անխուսափելիորեն պետք է հանգեցնի ապացուցման ոլորտում դատավարական գաղափարախոսության փոփոխության:

Օրենսդրի կողմից ապացույցների ազատ գնահատումից՝ որպես քրեական վարույթի առանձին սկզբունքից հրաժարվելը և պատշաճ ապացուցման սկզբունքն էքսպլիցիտ ամրագրելը դատարանից և վարույթի հանրային մասնակիցներից պահանջում է վերանայել ապացույցների թույլատրելիության կանոնների կիրառությունը միայն մարդու իրավունքների խախտումների հետ կապելու մոտեցումը:

Նոր օրենսդրության պայմաններում պետք է հատկապես արժևորել ապացույցները պատշաճ իրավական ընթացակարգերի պահպանմամբ հավաքելու գաղափարը: Պատահական չէ, որ ապացույցի օրենսդրական բնորոշման մեջ շեշտը դրվել է ոչ թե ապացույցի միջոցով քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներն օրենքով սահմանված կարգով պարզելու, այլ ապացույցն օրենքով սահմանված կարգով ստանալու (հավաքելու) հանգամանքը (ՀՀ ՔրԴ-Օ 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետ): Ապացույցի օրենսդրական բնորոշման մեջ ապացույցն օրենքով սահմանված կարգով ստանալու շեշտադրությունը ներդաշնակ է պատշաճ ապացուցման սկզբունքի հետ, որը կարևորում է փաստի մասին վերաբերելի տվյալները պատշաճ իրավական ընթացակարգին համապատասխան հավաքելու հանգամանքը:

Այսպիսով՝ ապացուցման իրավունքի ոլորտում սկզբունքային նոր գաղափարախոսությունը դատավորներից պահանջում է հրաժարվել ապացույցների թույլատրելիության ինստիտուտը շրջանցելու նպատակով՝ պատշաճ իրավական ընթացակարգերի էական խախտումը ձևական խախտում որակելու և դրանով իսկ ապացույցն անթույլատրելի ճանաչելուց խուսափելու պրակտիկայից:

1.3. «Ցանկացած հանգամանք» պատշաճ ապացույցով հաստատելու պահանջը

Պատշաճ ապացուցման սկզբունքի համատեքստում ՀՀ ՔրԴ-Օ-ում գործի լուծման «ճանաչողություն» առանց ապացուցման մոդելից անցում կատարվեց «ճանաչողություն միայն ապացուցման ձևով» մոդելին: Ապացույցի և ապացուցման օրենսդրական բնորոշումներից, ինչպես նաև՝ պատշաճ ապացուցման սկզբունքից ակնհայտ է,

www.aradadutyjournal.com

որ քրեադատավարական ճանաչողության և ապացուցման առարկաները նույնանուն են. ապացուցման առարկան են ոչ միայն գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը և այլն), այլ վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդվածի 1-ին մասում ուղղակիորեն ամրագրվեց, որ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ:

Ապացուցման օրենսդրական բնորոշման մեջ ևս նշվել է, որ ապացուցումը ոչ միայն ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, այլ նաև վարույթի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները հաստատելու կամ հերքելու նպատակով իրականացվող գործունեություն է (ՀՀ ՔրԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մաս):

Ապացուցողական իրավունքի տեսանկյունից Օրենսդրի այս մոտեցումը հեղափոխական քայլ է: Օրենսդիրը քրեական վարույթի պատշաճ ապացուցման սկզբունքից անմիջապես բխեցրել է կարևոր պահանջ՝ վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք հաստատել պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ:

ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդվածի 1-ին մասում գործածվող «ցանկացած հանգամանք» իմպերատիվ ձևակերպման պարագայում գործնական հարթությունում առարկայագուրկ է դառնում այն բանավեճը, թե քրեական վարույթի ընթացքում արդյոք դատավարական նշանակություն ունեցող հարցերի պարագայում հնարավոր է ճանաչողություն՝ առանց ապացուցման: Այլևս քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք, անկախ նրանից՝ դա գործի լուծման համար ունի անմիջական նշանակություն, թե ոչ, պետք է հաստատվի կամ հերքվի պատշաճ ապացույցների միջոցով:

Այս պահանջի պայմաններում գործնականում ինչպե՞ս կարող է ընկալվի ՀՀ ՔրԴՕ 107-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ըստ որի՝ մահվան պատճառը, առողջությանը հասցված վնասի բնույթը կամ ծանրության աստիճանը քրեական վարույթում կարող են հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ:

Պատշաճ ապացուցման սկզբունքի տեսանկյունից ՀՀ ՔրԴՕ 107-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ պետք է ընկալվի այնպես, որ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս առողջությանը հասցված վնասի բնույթը կամ ծանրության աստիճանը հաստատելու համար պատշաճ

ապացույց է դատաբժշկական փորձագետի եզրակացությունը: Օրինակ՝ առողջությանը պատճառված ծանր վնասի առումով առողջությանը պատճառված վնասի ծանրության որոշման հատկանիշներից է մարդու կյանքի համար վտանգավորությունը, իսկ վնասվածքը կյանքի համար վտանգավոր է, թե ոչ, կարող է հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ: Առանց փորձագետի եզրակացության առողջությանը հասցված վնասի բնույթը կամ ծանրության աստիճանն այլ ապացույցներով պարզելը, ինչպես նաև՝ քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ դրանց հիման վրա քրեաիրավական գնահատական տալը պատշաճ ապացուցման սկզբունքի տեսանկյունից անթույլատրելի է:

Ինչ վերաբերում է մահվան փաստերով քրեական հետապնդում հարուցելու համար մահվան պատճառը պարզելուն, ապա վարույթի այդ հատվածում մահվան պատճառը պարզելը պարտադիր պայման չէ: Օրինակ՝ սպանության հոդվածով քրեական հետապնդում հարուցելու համար բավարար է բռնի մահվան փաստի և դրան՝ անձի առնչության մասին բավարար ապացույցների առկայություն, իսկ վարույթի այս հատվածում մահվան պատճառը պարզելը քրեական հետապնդում հարուցելու պարտադիր պայման չէ: Ուստի, եթե մահվան պատճառի մասին փորձագետի եզրակացությունը դեռևս չի ստացվել, ապա դատախազն, առանց իրավական որևէ խոչընդոտի, կարող է մահվան փաստով հարուցել քրեական հետապնդում, սակայն որոշման մեջ պետք է խուսափի մահվան պատճառի մասին դատողություններից :

Եթե այլևս քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք, անկախ նրանից՝ դա գործի լուծման համար ունի անմիջական նշանակություն, թե ոչ, պետք է հաստատվի կամ հերքվի պատշաճ ապացույցների միջոցով, ապա ծագում է նաև դրա գործիքակազմի հարցը: Արդյոք ՀՀ քրեադատավարական նոր օրենսդրությունն նախատեսում է բավարար գործիքներ, որոնք հնարավորություն կտան քրեադատավարական նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք հաստատել կամ հերքել քրեադատավարական միջոցով: Հարցի պատասխանը դրական է:

Նախ՝ օպերատիվ-հետախուզական մի շարք միջոցառումների դատավարականացնելու և գաղտնի քննչական գործողությունների կարգավիճակ տալու եղանակով ընդլայնվել է քրեական վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելու կամ հերքելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքով կազմված փաստաթղթերը և որևէ կրիչի վրա ամրագրված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն (ՀՀ Քր-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳՕ 86-րդ հոդվածի 2-րդ մաս), ուստի այդ տվյալները չեն կարող օգտագործվել քրեական վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք հաստատելու համար: Օրինակ՝ այդ տվյալները ինքնին չեն կարող օգտագործվել քրեադատավարական հարկադրանքի միջոցները կիրառելու հիմքերի հաստատման նպատակով: Բացառություն են կազմում ՀՀ ՔրԴՕ 96-րդ հոդվածի 3-րդ մասով և 97-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերը:

Երկրորդ՝ քննչական գործողությունների համակարգում ավելացվել է քննչական գործողությունների նոր տեսակ՝ տեղեկատվության պահանջը, որը քննիչի գրավոր դիմումն է վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը (ՀՀ ՔրԴՕ 232-րդ հոդվածի 1-ին մաս): Զննչական այս գործողությունը՝ որպես ապացույց հավաքելու միջոց ճանաչելն էապես ընդլայնում է ապացույցի ձևով ունեցող տեղեկություններ ձեռք բերելու հնարավորությունը: Դրա միջոցով ձեռք բերված տեղեկությանը տրվում է ապացույցի ձև (կազմվում է տեղեկատվության պահանջի արձանագրություն և դրան կցվում է տեղեկանքի ձևով տրված տեղեկությունը), որի արդյունքում այդ ապացույցը կարող է օգտագործվել նաև դատական երաշխիքների վարույթում:

2. Ապացուցման ձևով ճանաչողության մոդելը դատական երաշխիքների վարույթում

2.1. Դատական երաշխիքների վարույթում «ճանաչողություն՝ ապացուցման ձևով» մոդելի դոկտրինալ էվոլյուցիան

Դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ընթացքում ինչպե՞ս է իրականացնում ճանաչողական գործունեությունը: Դոկտրինում այս հարցի վերաբերյալ առկա է երեք հիմնական մոտեցում.

- 1) ապացուցողական՝ դատական վերահսկողության ընթացքում ճանաչողությունը դիտարկվում է որպես ապացույցների հետ աշխատելու գործընթաց,
- 2) ոչ ապացուցողական՝ դատական ճանաչողությունը չի դիտարկվում որպես ապացուցման ձևաչափով իրականացվող գործունեություն,
- 3) համակցված՝ դատարանի ճանաչողությունն իրականացվում է ինչպես ապացուցման միջոցներով, այնպես էլ այլ եղանակներով:

ԱՀՄ փլուզումից հետո՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը օրենսդրական ճանաչման և ձևավորման սկզբնական ժամանակահատվածում, ռուսական և հայկական քրեական դատավարության դոկտրինում ընդունված էր այն մոտեցումը, որ

մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվում է ոչ ապացուցողական եղանակով, այսինք՝ ընդունված էր «ճանաչողություն՝ առանց ապացուցման» մոդելը, այդ իսկ պատճառով դատական վերահսկողության ընթացքում ապացուցման ձևով ճանաչողություն իրականացնելու հարցը հատուկ քննարկման առարկա չի հանդիսացել:

Ժամանակի ընթացքում դատական վերահսկողությունն «ճանաչողություն՝ առանց ապացուցման» մոդելով իրականացնելու մասին մոտեցումը մեղմվեց: 2000-ական թվականներից հետո առանձին դատավարագետներ հայտարարեցին դատական վերահսկողությունն «ճանաչողություն՝ ապացուցման» մոդելով իրականացնելու անհրաժեշտության մասին: Օրինակ՝ Ն.Ն. Կովտունը և նրա գաղափարակիցներ հետևողականորեն առաջ էին քաշում այն մտքը, որ մինչդատական վարույթի դատական նիստում ճանաչողությունը պետք է իրականացվի ապացուցման ձևով: Դատարանը պարտավոր է իր որոշման հիմքում դնել միայն թույլատրելի տեղեկությունները: Այս առաջարկությունը վերաբերում էր ինչպես միջնորդությանը կցված՝ քրեական գործից վերցված ապացույցներին, այնպես էլ դատարան լրացուցիչ ներկայացված կամ նրա կողմից պահանջված այլ տեղեկություններին¹⁰:

Ե. Յու. Լիխաչյովա 2005 թվականին իր ատենախոսության պաշտպանության դրույթների մեկի նվիրել է խափանման միջոցի իրավաչափության պայմանների ճանողությունն ապացուցման ձևով իրականացնելու անհրաժեշտության մասին: Նա նշել է.

«Դատական վարույթում խափանման միջոցի կիրառման և կալանքի ժամկետը երկարացնելու, ինչպես նաև քրեական արդարադատության բոլոր մյուս ոլորտներում, դատարանի որոշումը կանխորոշված է ապացուցմամբ: Օրենքում պետք է նախատեսվի խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննարկելիս դատական նիստում վկաներ հրավիրելու հնարավորություն՝ նրանց դատական այդ վարույթի առարկայի վերաբերյալ հարցաքննելու նպատակով»:

Ն.Պ. Կիրիլովան, խոսելով դատարանի կողմից խափանման միջոցների մասին միջնորդությունների քննության մասին, նշել է, որ կասկածանքի կամ մեղադրանքի հիմնավորվածությունը ապացույցներով հաստատելը հնարավոր է ապացույցների գնահատման միջոցով՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության և բավարարության տեսանկյունից, ընդ որում դատարանը գնահատում է ապացույցները՝ դիտարկելով դրանց բավարարությունը հետևյալ հարցերին պատասխանելու համար. արդյոք եղել է հանցագործություն, արդյոք կան ապացույցներ, որոնք հաստատում են այն փաստը, որ այն կատարել է հենց այն անձը, ում կալանքի անհրաժեշտության

www.aradaradutyjournal.com

մասին նշված է միջնորդությունում¹² :

Ս.Ի. Կոնևան և Տ.Վ. մելնիցկայան նույնպես նշում էին, որ մինչդատական քրեական վարույթի ընթացքում դատարանն իր ճանաչողական գործունեությունն իրականացնում է ապացուցման ձևով¹³ : Մինչդատական վարույթում խափանման միջոց կիրառելու հարցը քննելիս դատարանի կողմից ապացուցման իրականացման, ներառյալ՝ ապացույցների գնահատման անհրաժեշտության մասին են գրել են նաև Մ.Ի. Վորոնին¹⁴ , Օ.Գ. Իվանովան¹⁵ և Ա.Օ. Սաշովեցը¹⁶ :

2020-ական թվականներից սկսած ռուս հետազոտողներն առավել համակարգված և հետևողականորեն առաջ քաշում են այն թեզը, որ դատական վերահսկողությունը իրականացվում է կամ պետք է իրականացվի քրեադատավարական ապացուցման մոդելով, որի շրջանակներում պետք է գիտվեն նաև ապացույցի հատկանիշները¹⁷ : Առավել մանրամասն ներկայացնենք 2024 և 2025թթ.-ի ատենախոսությունները, որոնց հեղինակները հետևողականորեն հիմնավորում են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն ապացուցման ձևաչափով իրականացնելու գաղափարը:

Այսպես՝ Ա. Ռ. Չիկուլինան պնդում է, որ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատական վերահսկողական վարույթում փաստական տվյալների ճանաչողությունն իրականացվում է ապացուցման ձևով, պարզապես այն ուղղված է ոչ թե նախկինում տեղի ունեցած դեպքի, այլ ապագա հնարավոր վարքագծի վերաբերյալ տվյալներ հավաքելուն, ստուգելուն և գնահատելուն¹⁸ : Հեղինակը դատական վերահսկողության ընթացքում փաստացի հանգամանքների ճանաչման գործունեությունը հստակ նույնացնում է ապացուցման հետ:

Ըստ հեղինակի՝ դատական վերահսկողություն իրականացնելիս՝ դատարանն անվիճելիորեն մասնակցում է ապացուցմանը՝ կատարելով կողմերի ներկայացրած ապացույցների վերաբերելիության, թույլատրելիության և հավաստիության ստուգման պարտականությունը: Դա հնարավորություն է տալիս դատարանին կայացնելու օրինակյալ¹⁹, հիմնավորված և պատճառաբանված որոշում²⁰ : Հեղինակը բացահայտ խոսում է մինչդատական վարույթի ընթացքում իրականացվող դատական վերահսկողության ժամանակ դատարանների կողմից ապացույցների թույլատրելիությունը գնահատելու մասին:

Ս. Լուկյանովը, վերլուծելով տեսական մոտեցումները և պրակտիկայի ձևավորված միտումը, փաստարկված կերպով հանդես է գալիս դատական վերահսկողության գործընթացում դատարանի ճանաչողության՝ որպես ապացուցողական գործունեության բնույթի օգտին: Նրա դիրքորոշումը կարելի է ամփոփել հետևյալ կետերով.

1) Դատարանը, իրականացնելով նախնական

դատական վերահսկողություն, իրավասու է և պարտավոր է հաստատել դատական վերահսկողության առարկա հանդիսացող հանգամանքները բացառապես քրեական դատավարության ապացուցման միջոցներով (ՌԳ ԶրԴՕ 10-րդ, 11-րդ գլուխներ): Դատարանին ներկայացված ապացույցները գնահատելու լիազորություններից զրկելը կխեղաթյուրի դատական վերահսկողության ինստիտուտի իմաստը:

2) Դատարանը պետք է գնահատի ներկայացված ապացույցները, ներառյալ դրանց հատկանիշները (թույլատրելիություն, արժանահավատություն, բավարարություն): Այս գնահատականն ունի նախնական բնույթ և ծառայում է կոնկրետ դատական վերահսկողական վարույթի նպատակներին:

3) Այդպիսի գնահատումը չի ներխուժում ո՛չ գործի էությունը լուծող դատարանի, ո՛չ նախնական քննության մարմնի բացառիկ լիազորությունների մեջ:

4) Դատարանի լիազորությունները ապացուցման գործընթացում պայմանավորված են ընդունվող որոշումների նախնական բնույթով և քրեական դատավարության փուլերի փոփոխության ժամանակ ապացուցման տարբեր մակարդակների (աստիճանների) առկայությամբ:

5) Դատական վերահսկողության արդյունքում ընդունված որոշումները չունեն պրեյուդիցիալ նշանակություն գործի էությունը լուծող դատարանի համար²⁰ :

Այսպիսով, ռուսական դոկտրինում դատական վերահսկողությունը քրեադատավարական ապացուցման ձևով իրականացնելու դիրքորոշումը հավակնում է դառնալու որպես լայն ճանաչում ունեցող մոտեցում, որն էլ իր հերթին կարող է ազդել քրեադատավարական քաղաքականության վրա:

2.2. Դատական երաշխիքների վարույթում «ճանաչողություն՝ ապացուցման ձևով» մոդելի ներմուծումը ՀՀ իրավական համակարգում

2.2.1. Դատական երաշխիքների վարույթում ապացուցման ձևով ճանաչողություն իրականացնելու մերժումը

Մինչև պատշաճ ապացուցման սկզբունքի օրենսդրական ամրագրումը, ՀՀ դատական պրակտիկայում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվում էր «ճանաչողություն՝ առանց ապացուցման մոդելով, այսինքն՝ դատական վերահսկողության առարկան կազմող հանգամանքների պարզելու համար չէր պահանջվում, որպեսզի տվյալները ունենային դատավարական ապացույցի ձև: Օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, մինչև ՀՀ-ի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի միանալը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

իրավաբանությունը ՀՀ դատական իրավունք ներմուծելը, կալանքի կիրառման հիմքերի վերաբերյալ հիմնավորումներ չէր պահանջում, իսկ առանձին գործերով, եթե նման հիմնավորումներ ներկայացվում էին, ապա օգտագործվում էր «քրեական գործով ձեռք բերված նյութեր» ձևակերպումը²¹: Այսպես՝ քրեական գործերից մեկով Դատարանը նշել է «քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կապարել քրեական օրենքով արգելված նոր արարք»²²: Այս նյութերի դատավարական ձևի հարցը ո՛չ դրկտրինում, ո՛չ գործնականում հատուկ քննարկման առարկա չէր:

Հետագայում, ՀՀ վճռաբեկ դատարանը, Եվրոպական դատարանի իրավաբանության ազդեցության ներքո, կարևորելով շարունակյալ օրենսդրական ձևակերպումներով մարդուն կալանավորելու տարիների պրակտիկան հաղթահարելու առաջնահերթությունը, ներմուծեց կալանքը որոշակի նյութերի հիման վրա կիրառելու պահանջը, սակայն այն հարցը, թե այդ նյութերը քրեադատավարական ինչ՞ ձև պետք է ունենային, մնաց ստվերում: ՀՀ վճռաբեկ դատարանը կալանքի իրավաչափության պայմանները հիմնավորելու կապակցությամբ օգտագործվող տերմինների հարցում հետևողական չէր, նա զուգահեռաբեր օգտագործում էր տարբեր ձևակերպումներ, օրինակ՝ «ապացույցներ» և «փաստական տվյալներ» ձևակերպումները: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 30.08.2007 թ. թիվ ՎԲ-132/07 որոշմամբ նշել է.

«(...) կալանավորման հիմքերը (...) օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը: (...) կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ: (...)»:

Այս որոշմամբ դատարանը թեև նշել է, որ կալանավորման հիմքերը հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ, սակայն «ապացույց» բառն այս կոնտեքստում օգտագործվել է ոչ թե հատուկ տերմինի՝ քրեադատավարական ապացույցի, այլ՝ ընդհանուր (կենցաղային) իմաստով:

Հետագայում ՀՀ վճռաբեկ դատարանն առավել հստակ տարանջատեց «ապացույց» և «փաստական տվյալ (փաստ)» հասկացությունների օգտագործման կոնտեքստները՝ ապացույցները վերաբերում են մեղադրյալի մեղավորությունը հաստատելու գործընթացին, իսկ փաստական տվյալները՝ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմնավորմանը: Այսպես ՀՀ վճռաբեկ դա-

տարանը թիվ ԵԿԴ/0678/06/10 գործով 24.02.2011թ. որոշմամբ նշել է.

« (...) «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում (...)»:

ՀՀ վճռաբեկ դատարանը կալանքի հիմքերի հաստատման կապակցությամբ առավել հետևողականորեն օգտագործել է «փաստական տվյալ» ձևակերպումը: Այսպես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/0022/06/08 գործով 31.10.2008 թ. որոշմամբ ևս գործածել է «դատարանի հետևությունները գործի փաստական տվյալներով հիմնավորելու» ձևակերպումը, իսկ թիվ ՀՅԲԲԴ-3/0106/01/08 գործով 10.04.2009թ. որոշմամբ օգտագործել է «Անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով» ձևակերպումը, իսկ թիվ ԵԿԴ/0678/06/10 գործով 24.02.2011թ. որոշման «փաստական տվյալ» հասկացությանը զուգահեռ գործածել է «տեղեկություններ», «փաստեր» և «ապացույցներ» եզրույթները:

Ինչպես նկատում ենք այս գործով դատարանը կալանքի կիրառման նկատմամբ դատական վերահսկողության վարույթի կապակցությամբ օգտագործում է «ապացույց» եզրույթը, սակայն նկատի ունենալով, որ այս որոշման մեջ տերմիններն օգտագործվել են ոչ հետևողական, ուստի «ապացույց» եզրույթի առկայությունը ինքնին բավարար չէ պնդելու, որ դրանով փորձ է արվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության նկատմամբ տարածել նաև ապացույցման միջոցով դատավարական ճանաչողության մոդելը:

Այս ամենն էքսպլիցիտ ապացուցվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների և դատարանի աշխատակիցների պատրաստած «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Երևան, Աստղիկ, 2011» աշխատության մեջ արտացոլված հետևյալ դատողություններով.

«ՀՀ վճռաբեկ դատարանը, մատնանշելով կալանավորման հիմքում դրված փաստական հանգամանքների իրավաբանական բնույթը, կիրառում է ինչպես «ապացույց», այնպես էլ պարզապես «փաստական տվյալ» եզրույթները: Այստեղից կարող է հարց առաջանալ. արդյո՞ք հնարավոր է անձի կալանավորման մասին որոշումը պատճառա-

քանել ապացույց չճանաչված փաստական տվյալներով (օրինակ՝ բացատրություններով, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացվող տվյալներով): Այս հարցին անհրաժեշտ է դրական պատասխան տալ, քանի որ այս հիմնավորման համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանի մտադրությունը ոչ թե ապացույց չհանդիսացող փաստական տվյալների հիման վրա, այլ առանց որևէ փաստական հիմնավորման անձին կալանավորելու ոչ իրավաչափության ընդգծումն է» :

Հեղինակները նշում են նաև, որ հետագայում ՀՀ վճռաբեկ դատարանը հրաժարվել է «ապացույց» եզրից և գործածել է միայն «փաստական տվյալ» կամ «փաստական հանգամանք» ձևակերպումները:

2020-ականների համար արդեն հետադիմական համարվող այս մոտեցումը 1998թ. ՔԴ-Օ գործողության պայմաններում հաստատել է նաև ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը, ով 07.06.2021թ. ԲԳ- -29-Ո-Կ-11 որոշմամբ նշել է.

«Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով դատական իշխանությունն իրականացվում է երկու ձևով՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և արդարադատության միջոցով՝ գործն ըստ էության քննելով և լուծելով: (...) Սա բխում է դատական վերահսկողության իրականացման և գործի ըստ էության քննության խորքային, ճանաչողական տարբերություններից: Մասնավորապես՝ տարբեր են դատական ճանաչողության, իսկ մեղադրող կողմի համար՝ ապացուցման առարկան (համապատասխանաբար՝ հանցանքին առնչությունը և մեղքը), ապացուցման չափորոշիչները (հիմնավոր կասկած և ողջամիտ կասկածից վեր չափորոշիչներ) և դատական որոշումների հիմքում դրվելիք փաստական տվյալների կարգավիճակը (փաստերի ու տեղեկությունների ամբողջություն և ապացույցների համակցություն): Պատահական չէ, որ Եվրոպական դատարանը կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար դատարանից պահանջում է ստուգել «փաստերի և տեղեկությունների» ամբողջության առկայությունը՝ առանց օգտագործելու «ապացույցներ» եզրույթը, ինչը ենթադրում է ավելի բարձր ապացուցողական չափորոշիչին բավարարելու անհրաժեշտություն՝ թե առանձին ապացույցների առկայության, թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության, թե դրանց համակցության բավարարության առումով»:

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից այս հարցով Եվրոպական դատարանի օգտագործած տերմինները վկայակոչելն անտեղի է, քանի որ Եվրոպական դատարանն ընդհանուր առմամբ չի անդրադառնում ապացույցների՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ձևական հատկա-

նիշներին, նրա համար կարևորը ոչ թե ձևն է, այլ բովանդակությունը: Եվրոպական դատարանի եզրութաբանությունը վկայակոչելով՝ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդն ամենայն հավանականությամբ փորձել է ստեղծել իր դիրքորոշման պատճառաբանվածության պատրանք կամ իր դիրքորոշմանը հաղորդել հեղինակություն, մի դիրքորոշումը, որով ՀՀ դատարաններին զրկել են դատախազական և քննչական մարմինների կամայականություններին մինչդատական վարույթում հակազդելու գործուն հնարավորությունից:

Այսպիսով՝ պատմական այս ժամանակաշրջանում դրված չէր կալանքի հիմքերը քրեադատավարական ապացույցներով հաստատելու պահանջ, իսկ եթե կալանքի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում պաշտպանը բարձրաձայնում էր այդ «ապացույցների» թույլատրելիության հարցը, ապա դատարանն այն ըստ էության չէր քննարկում, քանի որ կալանքի հիմքերը հաստատող «ապացույցները» ոչ թե քրեադատավարական ապացույցներ են, այլ՝ պարզապես փաստական տվյալներ են, որոնք դիտարկվում էին դատավարական ձևից դուրս:

2.2.2. Դատական երաշխիքների վարույթում ապացուցման ձևով ճանաչողության մոդելի ճանաչումը և դրա մարտահրավերները

Պատշաճ ապացուցման սկզբունքը պահանջում է, որ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ (ՀՀ ՔԴ-Օ 22-րդ հոդվածի 1-ին մաս): Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանքների շարքին է դասվում նաև խափանման միջոց կիրառելու հիմքերը, ուստի դրանք պետք է հաստատվեն ոչ թե պարզապես փաստական տվյալներով, այլ բացառապես քրեադատավարական պատշաճ (վերաբերելի, թույլատրելի, հավաստի) ապացույցներով: Քրեադատավարական ճանաչողության հնարավորությունների ընդլայնումը՝ որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ օրենսդրությամբ որպես ապացուցողական գործողություն ճանաչելը, ինչպես նաև քննչական գործողությունների համակարգում «տեղեկատվության պահանջ» քննչական գործողության տեսակի ավելացումը, թույլ է տալիս խափանման միջոցի կիրառման իրավաչափության պայմանները, մասնավորապես՝ հիմքերը հիմնավորել ոչ թե դատավարական ձև չունեցող փաստական տվյալներով, այլ այնպիսի տվյալներով, որոնք ունեն ապացույցի դատավարական ձև:

Պատշաճ ապացուցման սկզբունքը դատական երաշխիքների վարույթի նկատմամբ ամբողջ ծավալով տարածելը պետք է առաջ բերեր երկու կարևոր փոփոխություն:

Նախ՝ ենթադրվում էր, որ օրենսդիրը հատկապես դատական երաշխիքների վարույթում իրակա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նացվող ճանաչողության կապակցությամբ պետք է նախատեսեր պատշաճ ապացուցման սկզբունքից բխող հատուկ կարգավորումներ (օրինակ՝ ապացույցների թույլատրելիության որոշման վերաբերյալ) և օգտագործեր ապացուցողական իրավունքին հատուկ տերմիններ: Սակայն այս հարցում օրենսդիրը հետևողական չի եղել: Դատական երաշխիքների վարույթներին վերաբերող օրենսդրական դրույթներում չի նախատեսել պատշաճ ապացուցման սկզբունքից բխող և ապացուցման ձևով ճանաչողության մոդելի վրա կառուցված հատուկ դրույթներ, նույնիսկ չի օգտագործել «ապացույց» կամ «ապացուցում» եզրույթները: Դատական երաշխիքների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներում շարունակել են օգտագործել ստանդարտ տերմիններ, օրինակ՝ խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքների վարույթի կապակցությամբ նշվում է, որ միջնորդությանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի պատճենները (ՀՀ ՔրԴՕ 285-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ եթե խափանման միջոցի իրավաչափության պայմանները սահմանող օրենսդրական դրույթներում «ապացույց» կամ «փաստական տվյալ» ձևակերպումը չի հանդիպում, ապա նույնը չի կարելի ասել գույքի արգելադրման վերաբերյալ դրույթների կապակցությամբ, քանի որ գույքի արգելադրման հիմքերի վերաբերյալ օրենսդրական նորմերում հետևողականորեն օգտագործվում է «ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում» ձևակերպումը (տե՛ս ՀՀ ՔրԴՕ 131-րդ հոդվածի 2-րդ մաս):

Երկրորդ՝ ենթադրվում էր, որ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է հետևեր պատշաճ ապացուցման սկզբունքի գաղափարախոսությանը և, իրավունքի զարգացման դոկտրինի սահմաններում, դատական երաշխիքների վարույթում անցում կատարեր ապացուցման ձևով քրեադատավարական ճանաչողության մոդելին: Եթե ՀՀ վճռաբեկ դատարանը հետևեր դատական երաշխիքների վարույթում պատշաճ ապացուցման սկզբունքից բխող պահանջներից, ապա պետք է հաստատեր, որ խափանման միջոց կիրառելու հիմքերը փաստարկվում (հիմնավորվում) են կոնկրետ քրեադատավարական ապացույցներով և պետք է փոխեր իր տերմինաբանությունը: Մինչդեռ առնվազն կալանքի կիրառման իրավաչափության վերաբերյալ դատական երաշխիքների վարույթով ՀՀ վճռաբեկ դատարանը իներցիայի ուժով շարունակում է հին մոտեցումը և օգտագործում է «տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ» ձևակերպումը (տե՛ս, օրինակ՝ թիվ ԵԴ-0339-06-23 գործով 07.02.2025թ. որոշումը): Գործնականում դա նշանակում է, որ կալանքի կիրառման իրավաչափության վերաբերյալ դատական երաշխիքների վարույթով ճանաչո-

ղությունն իրականացվում է ապացուցման դատավարական ձևից դուրս, այսինքն՝ կալանքի իրավաչափության պայմանների ճանաչողությունն իրականացվում է պարզապես փաստական տվյալներով և ոչ թե ապացույցներով:

Այսպիսով՝ օրենսդիրը, մի կողմից, էքսպլիցիտ ճանաչել է պատշաճ ապացուցման սկզբունքը, մյուս կողմից՝ օրենսդրական տեքստում պատշաճ ապացուցման սկզբունքի արժեքանական պոտենցիալն դատական երաշխիքների վարույթում լրիվ ծավալով չի իրացրել: Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը օրենսդրական այս բացին դեռևս չի անդրադարձել: Նա պատշաճ ապացուցման սկզբունքից բխող պահանջները դատական երաշխիքների վարույթի նկատմամբ կիրառելու հարցը պետք է ընդգրկի իր օրակարգ և, օգտագործելով extra legem իրավունքի զարգացման դոկտրինը, քրեական վարույթի պատշաճ ապացուցման սկզբունքի հիման վրա նախատեսի նոր պահանջներ:

3. Ապացույցների թույլատրելիության գնահատման իրավասություն դատական երաշխիքների վարույթում

Առանձին դատավարագետներ նշում էին, որ դատական նիստի ընթացքում դատարանն իրավասու է գնահատել միջնորդությանը կցված ցանկացած ապացույցի թույլատրելիությունը²⁴: Այս մոտեցումը դատական պրակտիկայում ճանաչում չի ստացել: Նկատի ունենալով, որ դատական երաշխիքների վարույթը տևական ժամանակ իրականացվել է «ճանաչողություն՝ առանց ապացուցման» մոդելի հիման վրա, ներկայումս ևս շարունակում է գերակայել այն մոտեցումը, որ դատական երաշխիքների վարույթներում ապացույցի թույլատրելիության կանոնները կամ ապացույցի հավաստիության գնահատման պահանջը կիրառելի չեն: Օրինակ՝ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ կալանքի միջնորդությունը քննարկելիս պաշտպանության կողմը փորձում է վիճարկել կալանք ընտրելու միջնորդության պատճառաբանության հիմքում դրված ապացույցի (փաստական տվյալի) թույլատրելիությունը, սակայն դատարանն այդ հարցը չի քննարկում, քանի որ կարծում է, որ կալանք ընտրելու որոշման հիմքում դրվում է ոչ թե ապացույցը, այլ փաստական տվյալները, ուստի մինչդատական վարույթի ընթացքում իրավասու չէ գնահատել ապացույցի թույլատրելիությունը: Այդ հարցը հնարավոր է քննարկել արդարադատություն իրականացնելիս: Օրինակ՝ թիվ ԵԴ/0779/06/20 դատական գործով (կալանքի կիրառման իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողություն) 16.12.2020թ. որոշմամբ ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկել է նույն դատարան նոր քննության՝ առաջին ատյանի դատարանում քննչական ենթակայության կանոնների

www.aradaradutyjournal.com

պահպանված լինելու հարցը չքննարկելու հիմնավորմամբ: ՀՀ վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն էր, որ մեղադրանքի օրինականությունը («անձին որպես մեղադրյալ ներգրավելու» մասին որոշումը պատշաճ, այսինքն՝ քննչական ենթակայության կանոններին համապատասխան լիազորված սուբյեկտի կողմից կայացնելը) հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը պարզելու պարտադիր նախապայման է: ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ վերաքննիչ դատարանի դատավորի նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ այն հիմնավորմամբ, որ դատավորն հիմնավոր կասկածի համատեքստում իրավասու չէր գնահատել քննչական ենթակայության հարցը: Կարգապահական վարույթի շրջանակներում դատարավորը նշել է, որ քրեական գործով քննչական ենթակայության կանոնների պահպանվածության հարցն ուղղակիորեն կապված է անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը կայացնելիս պատշաճ սուբյեկտ հանդիսանալու հանգամանքի պարզաբանման հետ: Միաժամանակ նշել է, որ դատարանը կալանավորման միջնորդությունը քննարկելիս իրավասու է քննել քրեական գործով քննչական ենթակայության կանոնների պահպանվածության հարցը, սակայն «ոչ թե ապացույցների թույլատրելիության, այլ մեղադրանքի օրինականության համատեքստում» (տե՛ս ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը 07.06.2021թ. ԲԳ- -29-Ո-Կ-11 որոշմամբ): Այս ամենից պարզ է դառնում, որ դատավորի դիրքորոշումն այն է, որ դատարանը դատական երաշխիքների վարույթում չի կարող անդրադառնալ ապացույցի թույլատրելիությանը:

Մինչդեռ, պատշաճ ապացույցման սկզբունքի օրենսդրական ճանաչումը ստիպում է վերանայել դատական երաշխիքների վարույթի ընթացքում ապացույցի թույլատրելիությունը քննարկելու անթույլատրելիության վերաբերյալ մոտեցումը: Չարգացման այս փուլում առկա են օրենսդրական և դոկտրինալ բավարար հիմքեր, որպեսզի ՀՀ վճռաբեկ դատարանը ճանաչի դատարանի իրավասությունը՝ դատական երաշխիքների վարույթի սահմաններում գնահատելու քննիչի ներկայացրած ապացույցի թույլատրելիությունը և հավաստիությունը:

Գործնականում ապացույցի թույլատրելիության և հավաստիության կանխավարկածը հնարավոր է հերքել նաև «փոքր» վարույթի (դատական երաշխիքների վարույթի) սահմաններում, եթե վիճարկող կողմն ներկայացնում է ծանրակշիռ փաստարկներ, որոնք դատարանին հնարավորություն են տալիս ներկայացված նյութերի հիման վրա ապացույցի թույլատրելի և հավաստիության վերաբերյալ դատողություններ անել:

Դատական իշխանությունը կկորցնի իր ինքնաբավությունը, եթե դատարանները դատական

երաշխիքների վարույթի սահմաններում զրկված լինեն ապացույցների ձեռք բերման օրինականությունը և հավաստիությունը գնահատելու հնարավորությունից: Դատարանը, որպես իշխանության կրող, անկասկած ունակ է դատական երաշխիքների վարույթի սահմաններում և այդ վարույթի խնդիրներից ելնելով գնահատել ապացույցի թույլատրելիությունը և հավաստիությունը, պարզապես այդ վարույթում տրված դատարանի գնահատականները (դրա հետևանքները) ընդհանուր չեն, այսինքն՝ դրանք չեն տարածվում մինչդատական ողջ վարույթի վրա, այլ սահմանափակվում են բացառապես դատական երաշխիքի վարույթով: Օրինակ՝ խափանման միջոց կիրառելու հիմքի առկայությունն փաստարկելու համար քննիչը դատարանին ներկայացրել է առանց դատարանի որոշման բնակարանում կատարված խուզարկության արդյունքում ձեռք բերված ապացույց: Այս պարագայում խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննող դատարանը կարող է այդ ապացույցը գնահատել որպես օրենքի էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալ և հաստատել, որ այն չի կարող օգտագործվել խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը հիմնավորելու համար: Դատարանի այս գնահատականը ֆորմալ իրավաբանական իմաստով չի կաշկանդում վարույթի հանրային մասնակցին մինչդատական վարույթի սահմաններում շարունակել խուզարկության արդյունքում ձեռք բերած տվյալը գնահատել որպես թույլատրելի ապացույց: Տեսականորեն նման բան հնարավոր է, սակայն գործնականում ողջամտությունը հուշում է իրադարձության զարգացման այլ տարբերակի մասին. եթե դատարանը դատական երաշխիքների վարույթի սահմաններում այս կամ այն ապացույցը գնահատել է որպես օրենքի էական խախտման ձեռք բերված և խափանման միջոց կիրառելու հիմքերի հիմնավորման համար ճանաչել է անթույլատրելի տվյալ, ապա դա հսկող դատախազի կամ քննիչի համար «կարմիր լույս է» մինչդատական վարույթի սահմաններում անդրադառնալ այդ ապացույցի թույլատրելիության հարցին:

Դատական պրակտիկայում արդեն կան օրինակներ, երբ դատարանները «փոքր» վարույթում փաստացի անթույլատրելի են ճանաչել օրենքի էական խախտումներով (օրինակ՝ առանց դատարանի որոշման խուզարկությամբ) ձեռք բերված ապացույցները՝ որպես խափանման միջոցի հիմքերի հաստատման անհամապատասխան տվյալներ: Օրինակ՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր Ս. Մարաբյանը թիվ ԱՎԴ-2/0001/06/20 գործով մի կողմից ուղիղ նշել է, որ մինչդատական վարույթի փուլի խնդիրը չէ գնահատելու ապացույցի թույլատրելիությունը, մյուս կողմից փաստել է, որ այս դեպքում խախտումն այնքան ակնհայտ է, որ հակառակ մոտեցումը կարող է գնահատվել որպես

www.aradaratutyunjurnal.com

կամայական և ոչ իրավաչափ: Դատավորը 18.06.2020թ. որոշմամբ նշել է.

«(...) «Ներքին դիտում» ՕՀՄ առերևույթ հակասում է ինչպես «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին (ՕՀԳ մասին օրենք), այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0229/01/16 գործով 11.04.2019 թ. որոշմամբ. սահմանված չափանիշներին, որը կարող է հետագայում իրավասու մարմինների կողմից ճանաչվել օգտագործման համար ոչ թույլատրելի, ուստի այս փուլում դրա հիման վրա անձի ազատության իրավունքի սահմանափակման համար անհրաժեշտ հիմնավոր կասկածի հաստատումը կարող է լինել կամայական և ոչ իրավաչափ: (...) ըստ ՕՀԳ մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ներքին դիտում ՕՀՄ կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է այն անցկացվի, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, իսկ այս դեպքում՝ առկա չի եղել որևէ փաստական տվյալ, որ Ս.Չ. -ին Հ.Կ-ի գործողություններով պատճառվել է այնպիսի վնաս, որը կարող է առերևույթ պարունակել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության հատկանիշներ, քանի որ դեպքից անմիջապես հետո Ս.Չ.-ն դիմել է փախուստի և նրան հայտնաբերել են այն ժամանակ (11.01.2020թ.) և փորձաքննություն է իրականացվել այն ժամանակ (13.01.2020թ.), երբ արդեն իսկ Ներքին դիտումը կատարված է եղել (կատարվել է 07.01.2020-10.01.2020թ.), ավելին՝ այն փաստացի իրականացվել է գործով անցնող տուժողի նկատմամբ, երբ արդեն ավարտված է եղել հանցագործությունը (ՕՀՄ մասին օրենքի իմաստն այն է, որ մինչև հանցագործության կատարումը պետք է կասկածի հիման վրա իրականացվեն այդ գործողությունները), ընդ որում՝ այն իրականացվել է հիվանդասենյակում, որը ՀՀ ՔրԴՕ-ի իմաստով բնակարան չէ»:

Թեև այս որոշումը կայացվել է 1998թ. ՔրԴՕ-ի գործողության ժամանակ, սակայն դատավորի

դիրքորոշումն խիստ առաջադիմական է, քանի որ դատական երաշխիքների վարույթի ընթացքում ապացույցի (փաստական տվյալի) թույլատրելիությունը քննարկելու անթույլատրելիության գերակայող մոտեցման պարագայում դատավոր Մարաբյանը փաստացի գնահատել է կատարված գործողության օրինականությունը:

4. Եզրակացություններ

2021թ. ՀՀ ՔրԴՕ-ում «ապացույցների ազատ գնահատման» սկզբունքի փոխարեն «պատշաճ ապացուցման» սկզբունքի ներդրումը հեղափոխական քայլ է, որի գործնական արդյունքը պետք է լինի դատավարական նորմերի էական խախտումների առկայության պարագայում տարբեր արդարացումներով ապացույցներն անթույլատրելի ճանաչելուց խուսափելու պրակտիկայի վերանայումը:

Պատշաճ ապացուցման սկզբունքը պահանջում է, որ քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք հաստատվի միայն պատշաճ (վերաբերելի, թույլատրելի, հավաստի) ապացույցներով, ինչը ենթադրում է անցում «ճանաչողություն՝ առանց ապացուցման մոդելից դեպի՝ ճանաչողություն միայն ապացուցման ձևով» մոդելի: Սակայն այս պահանջի հետևողական կիրառումը դատական երաշխիքների (օր.՝ կալանքի) վարույթում դեռևս չի իրականացվել:

Պատշաճ ապացուցման սկզբունքի տրամաբանական շարունակությունը դատական երաշխիքների վարույթում դատարանի կողմից ապացույցների թույլատրելիության գնահատման իրավասության ճանաչումն է: Դատարանը պետք է ունենա լիազորություն՝ «փոքր» վարույթում անթույլատրելի ճանաչել օրենքի էական խախտումներով ստացված ապացույցները:

¹ Ապացուցման միջոցները և ապացուցումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտատեսական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Դամբարյան. Երևան, ՀՈՀ հրատ., 2025:

² Ոչ իրավասու քննիչի կողմից ապացույց հավաքելն ինքնին մարդու հիմնական իրավունքների խախտում չէ, սակայն դատարանի կողմից այդ ծավալի ապացույցների օգտագործումը խաթարում է արդար դատաքննության իրավունքը: Սահմանադրագետների մեկ այլ խումբ կարծում է, որ իրավասություն չունեցող քննիչի կողմից քննչական գործողություններ կատարելն ինքնին հանգեցնելու է արդար դատաքննության իրավունքի խաթարման, քանի որ անձի իրավունքների նկատմամբ ցանկացած միջամտություն պետք է տեղի ունենա օրենքով և օրենքի հիման վրա, ուստի՝ արդար դատաքննության իրավունքը ենթադրում է, որ քննությունը պետք է իրականացնեն օրենքով այդ իրավասությունն ունեցող մարմինները և պաշտոնատար անձինք:

³ Այս մասին տե՛ս Դամբարյան Ա., Դազարյան Ա. Դատախազական անհնազանդությունը քննչական ենթակայության նկատմամբ (օրենսդրի լուրջությունը և դատավորի թողտվությունը) // ՀՀ սահմանադրական

դատարանի տեղեկագիր, 2021, № 1 (101), էջեր 7-40, Վամբարյան Ա., Վազարյան Ա. Քննչական ենթակայությունը և ընդհատությունը (գիտագործնական մեկնաբանություններ): Երևան, Մազադաթ, 2023, էջ 56-62:

⁴ Хачатурян Д. М. Независимость судей в Республике Армения: судоустройственные и уголовно-процессуальные гарантии. Ереван, Айастан, 2001. С. 7-16.

⁵ Պետրոս Վազարյանի հարցազրույցը Գ. Ջհանգիրյանի հետ // <https://www.facebook.com/watch/?v=1393338451177467>

⁶ 1998թ. ՀՀ ՔրԴ-ով այս մոդելը գործում էր միայն գործի լուծման հետ չկապված հանգամանքների ճանաչողության պարագայում, իսկ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների պարագայում գործում էր ճանաչողություն միայն ապացուցման ձևովե մոդելը:

⁷ Ի տարբերություն քրեական գործ հարուցելու հարցի լուծման փուլի, քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրությունում նախնական քրեաիրավական գնահատականը դուրս է քրադատավարական ապացուցման գործընթացից:

⁸ Лукьянов С.С. Компетенция суда при осуществлении судебного контроля на досудебных стадиях уголовного процесса: дис. ... канд. юрид. наук. Санкт-Петербург, 2025. С. 86.

⁹ Багаутдинов Ф.Н. О содержании судебного контроля на предварительном следствии // Журнал российского права. 2002. № 12. С. 12-15, Ավետիսյան Հ. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը որպես անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովման երաշխիք, Երևան, 2009, Ենգիբարյան Վ., Հակոբյան Մ. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրավական, տեսական և գործնական հիմքերը, ժամանակակից զարգացումներն ու կատարելագործման ուղիները: Գիտագործնական ձեռնարկ/ Խմբ.՝ Գ. Ավետիսյան. Երևան, Ասողիկ, 2015, Դանիելյան Ա. Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում: Ի.գ.թ. առենախոսություն: Երևան, 2019:

¹⁰ Ковтун Н.Н. Судебный контроль в уголовном судопроизводстве России. - Н. Новгород: Нижегород. правовая акад., 2002. С. 69, Ковтун Н.Н., Магизов Р.Р. Практика реализации судебного контроля за законностью и обоснованностью применения мер процессуального принуждения: Учеб.- практ. пособие. Н. Новгород: Нижегород. правовая акад., 2004. С. 37-40.

¹¹ Лихачева Е. Ю. Правообеспечительная роль правосудия в досудебном производстве по уголовным делам : автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2005. С. 10.

Кириллова Н.П. Теоретические и практические проблемы судебного контроля в российском законодательстве // Уголовная юстиция: связь времен : Избранные материалы международной научной конференции, Санкт-Петербург, 06-08 октября 2010 г. - М.: Акцион-Медиа, 2012. С. 50-51.

¹³ Конева С. И. К вопросу об участии судьи в доказывании при осуществлении судебного контроля на предварительном расследовании // Российский судья. 2014. № 4. С.24-25, Хмельницкая Т. В. Проблемы формирования доказательств в ходе досудебного производства по уголовному делу : дис. ... канд. юрид. наук. Нижний Новгород, 2016. С. 147-148.

¹⁴ Доказывание и принятие решений в состязательном уголовном судопроизводстве: монография / отв. ред Л.Н.Масленникова. М.: Норма. 2017. С. 160.

¹⁵ Иванова О.Г. Уголовно-процессуальное производство по избранию судом меры пресечения: уголовно процессуальная форма и особенности доказывания: дис. ... канд. юрид. наук. Красноярск, 2019. С. 17.

¹⁶ Машовец А. О. О получении судебных доказательств в рамках процедур судебного контроля в ходе досудебного производства // Юридическая наука и правоохранительная практика. 2015. № 4. С. 113.

¹⁷ Сухова И.И. Нравственные начала решения о необходимости избрания меры пресечения, допускаемой только по судебному решению: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2021, Устинов А.А. Доказывание при рассмотрении судом материалов уголовного дела в ходе досудебного производства: дис. ... канд. юрид. наук. М., 2022, Каблуков И.В. Актуальные вопросы обеспечения достаточности доказательств и иных данных в уголовном процессе: дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2023.

¹⁸ Чикюлина А.Р. Предмет и пределы доказывания при разрешении судом ходатайств об избрании мер пресечения: автореф. дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2024. С. 13, 197.

¹⁹ Чикюлина А.Р. Указ. соч. С. 90.

²⁰ Лукьянов С.С. Указ. соч. С. 110-111.

²¹ Վամբարյան Ա. Քրեադատավարական կալանքի կիրառման օրինականության ստուգումը ՀՀ վճարելի դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի պրակտիկայում // Օրենք և իրականություն, 2003, № 7-8, էջեր 32-35:

²² Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու (2000-2001թթ): Երևան, 2002, էջ 118:

²³ Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Ընդհանուր գիտ. Խմբ. Ա. Մկրտումյանի, Դ. Ավետիսյանի, Վ. Ենգիբարյանի, Ռ. Մելիքյանի: Երևան, Ասողիկ, 2011, էջ 127-128:

²⁴ Кальницкий В. В. Судебное заседание в досудебном производстве по уголовным делам: учебное пособие. Омск: Омская академия МВД России, 2009. С. 69.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ապացուցման միջոցները և ապացուցումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտաուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան. Երևան, ՀՈ-Հ հրատ., 2025, 615 էջ:
2. Ավետիսյան Հ. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը որպես անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովման երաշխիք, Երևան, 2009, 215 էջ:
3. Գանիբեյան Ա. Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում: Ի.գ.թ. ատենախոսություն: Երևան, 2019, 194 էջ:
4. Ենգիբարյան Վ., Հակոբյան Մ. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրավական, տեսական և գործնական հիմքերը, ժամանակակից զարգացումներն ու կատարելագործման ուղիները: Գիտագործնական ձեռնարկ/ Խմբ.՝ Գ. Ավետիսյան. Երևան, Ասողիկ, 2015, 314 էջ:
5. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Ընդհանուր գիտ. Խմբ. Ա. Սյրտումյանի, Դ. Ավետիսյանի, Վ. Ենգիբարյանի, Ռ. Մելիքյանի: Երևան, Ասողիկ, 2011, 408 էջ:
6. Ղամբարյան Ա. Քրեադատավարական կալանքի կիրառման օրինականության ստուգումը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի պրակտիկայում // Օրենք և իրականություն, 2003, № 7-8, էջեր 32-35:
7. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա. Գատախազական անհնազանդությունը քննչական ենթակայության նկատմամբ (օրենսդրի լուրջությունը և դատավորի թողությունը) // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2021, № 1 (101), էջեր 7-40:
8. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա. Քննչական ենթակայությունը և ընդդատությունը (գիտագործնական մեկնաբանություններ): Երևան, Մազադաթ, 2023, 240 էջ:
9. Багаутдинов Ф.Н. О содержании судебного контроля на предварительном следствии // Журнал российского права. 2002. № 12. С. 12-15.
10. Доказывание и принятие решений в состязательном уголовном судопроизводстве: монография / отв. ред Л.Н.Масленникова.-М.: Норма. 2017. - 384 с.
11. Иванова О.Г. Уголовно-процессуальное производство по избранию судом меры пресечения: уголовно процессуальная форма и особенности доказывания: дис. ... канд. юрид. наук. Красноярск, 2019. 203 с.
12. Каблуков И.В. Актуальные вопросы обеспечения достаточности доказательств и иных данных в уголовном процессе: дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2023. 258 с.
13. Кальницкий В. В. Судебное заседание в досудебном производстве по уголовным делам: учебное пособие. Омск: Омская академия МВД России, 2009. - 96 с.
14. Кириллова Н.П. Теоретические и практические проблемы судебного контроля в российском законодательстве // Уголовная юстиция: связь времен : Избранные материалы международной научной конференции, Санкт-Петербург, 06-08 октября 2010 г. - М.: Акцион-Медиа, 2012. - С. 49-51.
15. Ковтун Н.Н. Судебный контроль в уголовном судопроизводстве России. - Н. Новгород: Нижегород. правовая акад., 2002. - 332 с.
16. Ковтун Н.Н., Магизов Р.Р. Практика реализации судебного контроля за законностью и обоснованностью применения мер процессуального принуждения: Учеб.- практ. пособие. Н. Новгород: Нижегород. правовая акад., 2004. 68 с
17. Конева С. И. К вопросу об участии судьи в доказывании при осуществлении судебного контроля на предварительном расследовании // Российский судья. 2014. № 4. С. 23-26.
18. Лихачева Е. Ю. Правообеспечительная роль правосудия в досудебном производстве по уголовным делам : автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2005. 210 с.
19. Лукьянов С.С. Компетенция суда при осуществлении судебного контроля на досудебных стадиях уголовного процесса: дис. ... канд. юрид. наук. Санкт-Петербург, 2025. 396 с.
20. Машовец А. О. О получении судебных доказательств в рамках процедур судебного контроля в ходе досудебного производства // Юридическая наука и правоохранительная практика. 2015. № 4. С.110-114.
21. Сухова И.И. Нравственные начала решения о необходимости избрания меры пресечения, допускаемой только по судебному решению: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2021. 32 с.
22. Устинов А.А. Доказывание при рассмотрении судом материалов уголовного дела в ходе досудебного производства: дис. ... канд. юрид. наук. М., 2022. 235 с.
23. Хачатурян Д. М. Независимость судей в Республике Армения: судоустройственные и уголовно-процессуальные гарантии. Ереван, Айастан, 2001. 288 с.
24. Хмельницкая Т. В. Проблемы формирования доказательств в ходе досудебного производства по уголовному делу : дис. ... канд. юрид. наук. Нижний Новгород, 2016. 213 с.
25. Чикулина А.Р. Предмет и пределы доказывания при разрешении судом ходатайств об избрании мер пресечения: автореф. дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2024. 255 с.

Артур Гамбарян

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления РА, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

РЕЗЮМЕ

Применение принципа надлежащего доказывания и правил допустимости доказательств в производстве по судебным гарантиям

В 2021 году принцип надлежащего доказывания был эксплицитно закреплен в УПК РА в почетной системе принципов уголовного судопроизводства, заменив принцип свободной оценки доказательств. Он требует, чтобы любое имеющее значение для уголовного судопроизводства обстоятельство, включая основания для избрания меры пресечения, подтверждалось исключительно относительными, допустимыми и достоверными доказательствами. Это подразумевает переход к модели «познание только в форме доказывания». Несмотря на законодательное нововведение, данный принцип до сих пор не применяется в полной мере в производстве по судебным гарантиям (например, при избрании заключения под стражу), где суды продолжают использовать модель «познание без доказывания» и отказываются оценивать допустимость доказательств. В статье обосновывается, что судебная власть на основе принципа надлежащего доказывания должна пересмотреть эту практику и признать свою компетенцию оценивать допустимость доказательств также и в производстве по судебным гарантиям.

Ключевые слова: надлежащее доказывание, судебные гарантии, судебный контроль, «познание только посредством доказывания», условия правомерности применения заключения под стражу, допустимость доказательства.

Artur Ghambaryan

Head of the Department of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Professor of Public Administration Academy of the RA, Doctor of Juridical Sciences, Professor, Honored Lawyer of the RA

SUMMARY

Application of the principle of proper proof and the rules of admissibility of evidence in judicial guarantee proceedings

In 2021, the principle of proper proof was explicitly enshrined in the RA Criminal Procedure Code within the esteemed system of principles of criminal proceedings, replacing the principle of free evaluation of evidence. It requires that any circumstance material to criminal proceedings, including the grounds for applying a preventive measure, be established solely by relevant, admissible, and reliable evidence. This implies a transition to a “cognition only through proof” model. Despite this legislative innovation, the principle is not yet fully applied in judicial guarantee proceedings (e.g., when applying detention), where courts continue to use the “cognition without proof” model and refuse to assess the admissibility of evidence. The article argues that the judiciary, based on the principle of proper proof, should revise this practice and recognize its authority to evaluate the admissibility of evidence also within judicial guarantee proceedings.

Key words: Proper proof, judicial guarantees, judicial oversight, “cognition only through proof”, conditions for the lawfulness of applying detention, admissibility of evidence.